

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վարկի նպատակը	Անշարժ գույքի ձեռքբերում
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ
Նվազագույն և Առավելագույն գումարը	3,000,000 - 50,000,000 ՀՀ դրամ
	6,000 - 100,000 USD
	5,000 - 88,000 EURO
Վարկի ժամկետ (ամիս)	12 - 120 ամիս
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցությունը	գույքի շուկայական արժեքի նկատմամբ մինչև 80%
Վարկի և տոկոսների մարման եղանակը	անուփստեղ և խառը
Տարեկան անվանական տոկոսադրույքը՝	ՀՀ դրամով սկսած 18%, USD սկսած 14%, EUR սկսած 12%, <i>հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:</i>
Տարեկան փաստացի տոկոսադրույքը	13.07% - 23.90%
Կանխավճար՝	սկսած 20%-ից
Վարկի տրամադրման վճար	0.1% - նվազագույնը 25,000 ՀՀ դրամ
Ամսական սպասարկման վճար	վարկի գումարի 0.01%-ի չափով, նվազագույնը՝ 5000 ՀՀ դրամ
Կանխիկացման վճար՝	0.3% ՀՀ դրամով վարկերի դեպքում
	0,4% USD և EURO վարկերի դեպքում
Վարկի ապահովվածությունը՝	Ձեռք բերվող անշարժ գույքը
Երաշխավորություն՝	Անհրաժեշտության դեպքում կարող է պահանջվել նաև ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություններ
Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ ծախսեր՝	Գույքի գնահատում 15,000 - 35,000 ՀՀ դրամ Պետական տուրքեր և այլ ծախսեր Միասնական տեղեկանք՝ սկսած 10,000 ՀՀ դրամ Նոտարական վավերացման վճարներ՝ 15,000 – 40,000 ՀՀ դրամ Գրավի պետական գրանցման վճար՝ մինչև 26,000 - 45,000 ՀՀ դրամ Գույքի ապահովագրության վճար՝ 0.15-0.16% գնահատված շուկայական արժեքից
Տույժեր՝	Ժամկետանց գումարի տույժ՝ օրական 0.1%,
	Ժամկետանց տոկոսի տույժ՝ օրական 0.1%
Վարկառուն իրավունք ունի՝	Իր նախաձեռնությամբ Պայմանագրի մասը հանդիսացող ժամանակացույցով սահմանված ժամկետներից շուտ մասնակի կամ ամբողջությամբ մարել վարկը և դրա դիմաց հաշվարկված փաստացի

	<p>տոկոսագումարը: Ընդ որում, վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսը, այդ թվում՝ Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ընդհանուր տոկոսագումարը, տրամադրման և սպասարկման վճարները,</p>
<p>Տուգանքներ՝</p>	<p>Վարկատուն իրավունք ունի Վարկի վաղաժամկետ մարման դեպքում վարկառուի նկատմամբ կիրառել տուգանք հետևյալ կերպ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկառուն վճարում է տուգանք՝ մարվող գումարի 0,6 (զրո ամբողջ վեց տասնորդական) տոկոսի չափով,</li> <li>• Պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկառուն վճարում է տուգանք՝ մարվող գումարի 0,4 (զրո ամբողջ չորս տասնորդական) տոկոսի չափով,</li> <li>• Պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկառուն վճարում է տուգանք՝ մարվող գումարի 0,2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով,</li> <li>• Պայմանագրի գործողության երրորդ տարվա ավարտից հետո վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկառուն տուգանք չի վճարում: Ընդ որում, Վարկառուից վաղաժամկետ մարման տույժ չի գանձվում այն գումարի նկատմամբ, որը չի գերազանցում վաղաժամկետ մարման պահին հաջորդող 12 ամիսների համար մարման ժամանակացույցով նախատեսված վարկի մայր գումարի հանրագումարը:</li> </ul>

**Վարկը հաստատելու հիմքերը՝**

- Դիմողը ունի դրական վարկային պատմություն կամ չունի վարկային պատմություն,
- Դիմողն ունի ընդունելի վարկային ծանրաբեռնվածություն,
- Դիմողն ունի վարկարժանության գնահատման դրական եզրակացություն
- Ներկայացվել են կազմակերպության կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք արժանահավատ են,
- Դիմողը համապատասխանում է կազմակերպության կողմից առաջադրվող մյուս պահանջներին:

**Վարկի մերժման պատճառներն են՝**

- դիմելու պահին այլ գործող ժամկետանց վարկի առկայությունը
- բացասական վարկային պատմությունը
- վարկը մարելու համար անբավարար եկամուտները
- անարժանահավատ տեղեկությունների տրամադրումը
- սնանկ ճանաչված լինելը
- հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտը
- միևնույն ընտանիքի անդամների միջև գործարքները

Այն դիմորդները, որոնք չեն համապատասխանում Կազմակերպության պահանջներին, կամ Կազմակերպությանը չի բավարարում հաճախորդի վարկունակությունը չեն կարող վարկավորվել, որի վերաբերյալ հաճախորդի ցանկությամբ Կազմակերպությունը կարող է տրամադրել գրավոր մերժում:

## **Որոշման կայացման ժամկետը`**

Վարկի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

## **Պահանջվող փաստաթղթերի ցանկ`**

### **Գնորդը ներկայացնում է`**

- Դիմում (սահմանված ձևով),
- Անձնագիր կամ նույնականացման քարտ,
- Սոցիալական քարտ,
- Տեղեկանք աշխատանքի վայրից, որտեղ պարտադիր պետք է նշվի հաճախորդի զբաղեցրած պաշտոնը, ամսական աշխատավարձի չափը և/կամ եկամուտների հայտարարագիր (սահմանված ձևով),
- Եթե հաճախորդը ունի սեփական բիզնես, ապա ներկայացվում են` կանոնադրությունը, տեղեկանք պետ. ռեգիստրից կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ և եկամուտների հայտարարագիր (սահմանված ձևով),
- Այլ փաստաթղթեր (օրինակ` տեղեկանք` պարտադիր սոց. ապահովագրության վճարների վերաբերյալ, գնորդի այլ սեփականությունը հավաստող փաստաթղթերի պատճեններ և այլն),
- Եթե գնորդը ամուսնացած է`
- Ամուսնու անձնագիր կամ նույնականացման քարտ,
- Ամուսնության վկայական,
- Ամուսնու համաձայնությունը վարկ ստանալու, բնակարան գնելու և գրավադրելու վերաբերյալ,
- Անհրաժեշտության դեպքում` Երրորդ անձի երաշխավորություն (երաշխավորողի անձը և վճարունակությունը հավաստող փաստաթղթեր` ֆինանսական հաշվետվություններ և այլն),

### **Վաճառողը ներկայացնում է`**

- Գնվող գույքի բոլոր սեփականատերերի անձնագրերը, անչափահասների համար` ծննդյան վկայականներ,
- Վաճառողի սոցիալական քարտը,
- Եթե կան համասեփականատեր կամ գրանցված անձիք, ովքեր բացակայում են ՀՀ-ից, ապա նոտարով հաստատված` լիազորագիր (համասեփականատերի համար) համաձայնությունգրանցված անձանց համար) և նոտարի կողմից հաստատված թարգմանությունը, անձնագրերի պատճենները,
- Գնվող գույքի սեփականության վկայական,
- Գրավադրվող գույքի սեփականության իրավունքի ծագման հիմքեր,
- Միասնական տեղեկանք սահմանափակումների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի ռեգիստրի պետական կոմիտեից (վարկի տրամադրման դրական եզրակացություն ստանալուց հետո),
- Գրավադրվող անշարժ գույքի գնահատման ակտը և լուսանկարներ,
- Եթե սեփականատերը(երը) ամուսնացած է (են)`
- Ամուսնու անձնագիր կամ նույնականացման քարտ,
- Ամուսնության վկայական,
- Ամուսնու համաձայնությունը գույքը վաճառելու համար:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

## ՉԳՈՒՇԱՑՈՒՄ

Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉԿՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

Վարկառուի կողմից պարտականությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել վարկառուի այլ գույքի հաշվին:

Վարկ ստանալու համար կարող են դիմել 21 տարին լրացած Հայաստանի ռեզիդենտները, որոնք վարկի սպասարկման ընթացքում չեն բոլորի 70 տարեկանը

## Համագործակցող ապահովագրական և գնահատող ընկերություններ՝

Ապահովագրական Ընկերություններ	Ընկերության գործունեության հասցեն	Հեռախոսահամար
«Ինգո-Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 51, 53	010 59 21 00
«Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ	Հայաստան, 0001, ք. Երևան, Հյուսիսային պող., 1 շենք	012 888 888
Գնահատող Ընկերություններ	Ընկերության գործունեության հասցեն	Հեռախոսահամար
«Ռիվալ Քոնսալթինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց, փակուղի 8	010 525 535
«Վի ԷՄ – ԱՐ ՓԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց, փակուղի 8, թիվ 3	010 588 797
«Օլիվեր գրուպ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան փող., 8 շենք	010 542 740
«Գարդի» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան փող., 8 շենք	096 520 590